

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

01.01.2020-30.12.2020թ.

ՀՀ ԱՆ ՊՐՈՔԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ՊԱՏԻԺ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ, ՊԱՏԺԻ ԶԿՐԱԾ ՄԱՍՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ, ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄՎԱԾ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ պրոքացիայի ծառայության կողմից **2020** թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում դատական ակտերի և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ծանուցումների հիման վրա իրականացվել է **4661** վարույթ, մասնավորապես՝

Իրականացվել է 2020 անձի նկատմամբ պատիժ՝

- տուգանք – **1364** անձի նկատմամբ.
- որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում - **420** անձի նկատմամբ.
- հանրային աշխատանքներ -**236** անձի նկատմամբ.

Իրականացվել է 1611 անձի նկատմամբ վերահսկողություն՝

- Իրականացվել է պատիժը պայմանականորեն չկիրառելու և փորձաշրջան նշանակելու վերաբերյալ- **1242** վարույթ.
- Իրականացվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ - **365** վարույթ: Պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է **195** անձ:
- Իրականացվել է մինչև երեք տարեկան երեխա ունեցող և ծանր հիվանդության հիմքով պատժի կրումը հետաձգման վերաբերյալ **4** վարույթ:

Պատիժ և վերահսկողություն է իրականացվել **3351** տղամարդու, **280** կնոջ, **41** անչափահասի և **42** օտարերկրացու նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Պրոքացիայի ծառայությունում առկա է եղել **1030** անձանց վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույց կազմվելու մասին անձնական գործեր:

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում ստացվել է **758** պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույց կազմելու մասին ծանուցումներ:

Կազմվել է **698** զեկույց, որից **121-ը** դրական եզրակացությամբ, իսկ **577-ը** բացասական եզրակացությամբ, զեկույցներից **204-ը** կազմվել են կրկնակի և ավելի:

Ներկայումս **104** զեկույց գտնվում են կազմման փուլում:

Արխիվացվել է **484** զեկույցով կազմված անձնական գործ:

Դատվածությունը հանելու վերաբերյալ դատարանների կողմից ստացվել է զեկույց կազմելու վերաբերյալ **8** գրություն, որոնցով կազմվել և դատարան է ներկայացվել **8** զեկույց:

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայության կողմից **2337** շահառուի նկատմամբ իրականացվում է **2486** պատիժ և վերահսկողություն, որից **141** շահառուի նկատմամբ դատարանի կողմից նշանակվել է կրկնակի պատիժ և վերահսկողություն, իսկ **4** շահառուի նկատմամբ նշանակվել է եռակի պատիժ և վերահսկողություն:

Ավարտվել և արխիվացվել է **1145** վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում պրոբացիայի ծառայությունում պատիժներով և վերահսկողություններով հաշվառված **3482** անձանցից կրկնահանգագործություն կատարել է **36** անձ, որը կազմում է ծառայությունում հաշվառված շահառուներ մոտ **1%** -ը:

Տուգանք պատժատեսակով ստացված դատական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **1364** շահառուի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակով վարույթներ, որոնցով գանձման ենթակա ընդհանուր գումարը կազմում է **475.421.850** ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում գանձվել **128.778.390** ՀՀ դրամ, ինչը **6** %-ով ավելին է, քան 2019 թվականին, իսկ **45.926.000** ՀՀ դրամ տուգանքի գանձման գործընթացը դադարեցվել է այլ հիմքերով /մահվան, տուգանքը փոխարինվել է հանրային աշխատանքներ պատժատեսակով, համաներման և օրենքով սահմանված այլ հիմքերով/:

Հանրային աշխատանքներ պատժատեսակով ստացված դատական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում առկա է եղել **236** շահառուի վերաբերյալ հանրային աշխատանքներ պատժատեսակը կիրառելու մասին դատական ակտեր հիման վրա իրականացվող վարույթներ, հաշվետու ժամանակահատվածում ստացվել է նոր **136** դատական ակտ և իրականացվել համապատասխան վարույթներ:

Շահառուներից **63**-ը կնքել են աշխատանքային պայմանագրեր, որոնցից ներկայումս աշխատում են **40**-ը: Շահառուներից **23**-ը ներկայումս չեն աշխատում, որոնցից **4** շահառուի հանրային աշխատանքներն ընդհատվել են, **19** շահառու հրաժարվում են աշխատանքներ կատարելուց, իսկ **19**-ը հրաժարվել են աշխատանքային պայմանագիր կնքելուց և աշխատելուց: **45** շահառուի վերաբերյալ աշխատանքային պայմանագրերը գտնվում են կնքման ընթացքում:

Շահառուներից **49**-ը փաստացի կատարել են հանրային աշխատանքները, **2**-ի նկատմամբ կիրառվել է համաներում, **5** շահառու մահացել է, **1** շահառու ազատվել է հանրային աշխատանքներ պատժատեսակից՝ դատական ակտի կատարման վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, **2** շահառու հանվել է հաշվառումից դատական ակտը բեկանելու հիմքով, **5** շահառուի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքները դատարանի որոշմամբ փոխարինվել է ազատագրկմամբ: Հետախուզման մեջ է գտնվում **9** շահառու:

Շահառուներից **29**-ի պատիժը կասեցվել է, որոնցից **28**-ը գտնվում են ազատագրկման մեջ, **1** շահառու գտնվում է զինվորական ծառայության մեջ: Շահառուներից **7**-ի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են):

Դատարան է ներկայացվել **41** շահառուի նկատմամբ միջնորդություն՝ հանրային աշխատանքներն ազատագրկմամբ փոխարինելու, իսկ **10** շահառուի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակով հաշվառված շահառուներից **7**-ը կին են, **229**-ը տղամարդ և **2**-ը **16** տարին լրացած անչափահաս անձ:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել պատժատեսակով ստացված դատական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում առկա է եղել **420** շահառուի վերաբերյալ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժատեսակը կիրառելու վերաբերյալ վարույթներ, հաշվետու ժամանակահատվածում դատարանի կողմից Պրոբացիայի ծառայություն է ուղարկվել **145** անձի նկատմամբ որոշակի պաշտոններ

զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ դատական ակտեր, որոնց հիման վրա իրականացվել են համապատասխան վարույթներ:

Պատժից **3-ը** նշանակված է որպես հիմնական պատիժ, իսկ **417-ը** որպես լրացուցիչ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկում նշանակված է եղել **271** անձի նկատմամբ, իսկ այլ պաշտոններ զբաղեցնելու կամ այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում **149** անձի նկատմամբ:

267 շահառուի վերաբերյալ կազմված անձնական գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են **153** շահառու՝ **145-ը** պատիժը փաստացի կատարելու հիմքով, **5** շահառու մահացել է, **3** շահառու դատական ակտով ազատվել է պատժի կրումից:

4 շահառու գտնվում է ազատագրկման մեջ, **2** շահառու գտնվում է հետախուզման մեջ:

Հաշվառված շահառուներից **36-ը** կին են, **384-ը** տղամարդ, **4-ը** օտարերկրյա քաղաքացի:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստացված դատական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում առկա է եղել **1242** անձի վերաբերյալ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ վարույթներ, հաշվետու ժամանակահատվածում ստացվել է նոր **787** դատական ակտ, որոնց հիման վրա իրականացվել են համապատասխան վարույթներ:

Հաշվառումից հանվել է **331** շահառու, որից **289** անձի փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, **19** շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում, **15** շահառու մահացել է, **1** շահառուի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է, **5** շահառուի նկատմամբ նոր հանցանք կատարելու հետևանքով դատավճիռների համակցությամբ նշանակվել է ազատագրկման ձևով պատիժ, **2** շահառուի վերաբերյալ դատական ակտերը բողոքարկվել են վերաքննության կարգով, ինչի արդյունքում առաջին ատյանի դատական ակտերը ուժի մեջ չեն մտել:

Կատարման ընթացքում է **911** գործ:

Փորձաշրջանի մեջ գտնվող **15** շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Վերահսկողությունից խուսափող **24** շահառու գտնվում է հետախուզման մեջ, իսկ **20** շահառուի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա /կալանավորում/:

Հաշվառված շահառուներից **136-ը** կին են, **1106-ը** տղամարդ, **34-ը** անչափահասների և **8-ը** օտարերկրյա քաղաքացի:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին ստացված դատական ակտերի կատարման ընթացքի վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում իրականացվել է **365** անձի վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում դատարանի կողմից ստացվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ **236** դատական ակտ: Պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է **195** անձ:

Հաշվառումից հանվել է **138** շահառու, որից **130** անձի պատժի չկրած մասի ժամկետը լրացել է, **6** շահառուի պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելը վերացվել է դատարանի կողմից, **1** շահառուի նկատմամբ նոր հանցանք կատարելու հետևանքով դատավճիռների համակցությամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ, **1** շահառու մահացել է, **1** շահառու արտաքսվել է:

227 շահառուի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, **2** շահառուի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա (կալանավորվել են), **5** շահառու գտնվում է հետախուզման մեջ:

Հաշվառված շահառուներից **21**-ը կին են, **344**-ը տղամարդ և **13**-ը օտարերկրյա քաղաքացի:

Դատապարտյալի հղիության, մինչև երեք տարեկան երեխա ունեցող կամ ծանր հիվանդության հիմքով պատժի կրումը հետաձգելու վերաբերյալ ստացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ

Պրոբացիայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված **4** շահառու, որոնցից **3**-ի պատիժը հետաձգված է ծանր հիվանդության հիմքով, **1** շահառու ունի խնամքին մինչև **3** տարեկան երեխա: Հաշվառումից հանվել է **1** շահառու, վերահսկողության ընթացքի մեջ է **3** շահառու:

Պատժի կրումը հետաձգված **4** շահառուից **3**-ը տղամարդ են, **1**-ը կին:

Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման նպատակով իրականացվել են միջոցառումներ, մասնավորապես՝

- Կրթական միջոցառումներին մասնակցել է **33** շահառու (շահառուներից ոմանք մասնակցել են 2 և ավելի տարբեր դասընթացների), ընդ որում **14** շահառու մասնակցել է՝ «Անգլերեն լեզու», **8** շահառու՝ «Բիզնես գրագիտություն», **15** շահառու՝ «Համակարգչային հմտություններ», **10** շահառու՝ «Դեկորատիվ արվեստ» դասընթացներին,

- Մշակութային միջոցառումներին մասնակցել է **53** շահառու, որից **8** շահառու

մասնակցել է «Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-րդ տարեդարձին ընդառաջ» թեմայով հանդիպմանը, **45** շահառու մասնակցել է զանազան համերգային ծրագրերին և այցելել է մշակութային կենտրոններ և պատկերասրահներ:

- Մարզական միջոցառում՝ **4** շահառու մասնակցել է վոլեյբոլի խաղերին Գավառի սպորտդպրոցում:

- Կրոնական միջոցառումներին մասնակցել է **98** շահառու՝ 16-ը կին և 82-ը տղամարդ, որոնցից 6-ը անչափահաս:

- Իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել **784** շահառուի:

- Հոգեբանական աջակցություն ստանալու ուղղորդվել է **185** շահառու, որից **173**-ի նկատմամբ իրականացվել են անձնային աճի բարձրացման, հոգեկարգավորման, ագրեսիվության նվազեցման, կոնֆլիկտայնության նվազմանն ուղղված աշխատանքներ:

- Բժշկական հաստատություններ և աջակցման կենտրոններ ուղղորդվել է այցելության **27** շահառու:

- Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ և իրականացված վերասոցիալականացման միջոցառումների արդյունքում աշխատանքի է ընդունվել **49** շահառու:

- **404** շահառու մասնակցել է այլ միջոցառումների, **17** շահառու մասնակցել են առաջնագիծ ուղարկելու նպատակով հավաքագրված ապրանքների պահեստավորման և փաթեթավորման աշխատանքներին: Շահառուների աջակցման ծրագրերի իրականացման արդյունքում «Արդարության ուղի» ՀԿ-ի, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնի», ՄԱԿ-ի «ՅՈՒՆԻՍԵՖ» մանկական հիմնադրամի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայությունների կենտրոնի, «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի, «Հայաստանում կանանց հիմնադրամի» և «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպության կողմից **387** շահառուի տրամադրվել է առաջին անհրաժեշտության սնունդ, հիգիենայի պարագաներ և շահառուների դպրոցահասակ երեխաների համար՝ դպրոցական պարագաներով համալրված պայուսակներ:

Համագործակցություն

- Համագործակցության հուշագիր է կնքվել «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության հետ, որի համաձայն վերջինս Ծառայության անչափահաս և երիտասարդ շահառուներին հնարավորություն է ընձեռելու մասնակցել ԵԱԴ տեղական և միջազգային երիտասարդական ծրագրերին, իրականացվող արշավներին, բնապահպանական և այլ տիպի նախաձեռնություններին:

- Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման նպատակով ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ, մասնավորապես՝ համագործակցության հուշագիր է կնքվել

- «Հելսինկյան ասոցացիա» հասարակական կազմակերպության հետ: Հուշագրի նպատակն է համատեղել Կողմերի կարողությունները՝ պրոբացիայի շահառուների

օրինապահ վարքագծի դրսևորման, իրավագիտակցության բարձրացման, հանրային կյանքում վերահիստեգրվելու, նոր հանցագործությունների կանխման նպատակով վերասոցիալականացման միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու գործընթացներում, նպաստել պրոբացիայի ոլորտի զարգացմանը՝ դրա մասին հանրային տեղեկատվության տարածման միջոցով, ինչպես նաև բարելավել Պրոբացիայի ծառայության գրասենյակային ու տեխնիկական պայմանները, զարգացնել պրոբացիայի ծառայողների ունակություններն ու հմտությունները:

- Շահառուների վերասոցիալականացման նպատակով համագործակցություն է սկսվել մշակութային մի շարք կառույցների հետ /Կապ է հաստատվել մշակութային հաստատությունների հետ, մասնավորապես «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա», «Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն», «Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն», «Երևանի պետական տիկնիկային թատրոն», «Պարի պետական անսամբլ», «Թաթուլ Ալթունյանի անվան պարի անսամբլ», «Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ների հետ մշակվել են համագործակցության հուշագրեր, պայմանավորվածություն է ձեռք բերվել տարբեր մշակութային միջոցառումներին պրոբացիայի շահառուների մասնակցության ապահովման հարցում, որը կնպաստի վերջիններիս հանրային կապերի ընդլայնմանը և արդյունավետ վերահիստեգրմանը հասարակության մեջ/:

- Նախատեսվում է համագործակցության հուշագիր կնքել Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հետ, որի նպատակն է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրների վերաբերյալ գիտակրթական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

- Պրոբացիայի ծառայության և «World Vision» Հայաստան գրասենյակի համագործակցության շրջանակներում նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ Պրոբացիայի շահառուների շուրջ 100 երեխաների տրամադրվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ: Սույն թվականին նախատեսվում է հուշագիր կնքել միմյանց միջև համագործակցության շրջանակը ընդլայնելու համար:

- Պրոբացիայի ծառայության և «Յունիսեֆ» մանկական հիմնադրամի համագործակցության շրջանակներում Պրոբացիայի շահառուների երեխաներին տրամադրվել է գրենական պիտույքներ և հիգենիայի պարագաներ:

- Պրոբացիայի ծառայության և «Երիտասարդ Տավուշ» հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում պրոբացիայի շահառուների թվով 5 երեխաներին նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ տրամադրվել է հագուստ:

- Պրոբացիայի ծառայության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայությունների կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում պրոբացիայի թվով 120 շահառուներին տրամադրվել է պարենային փաթեթներ:

- Պրոբացիայի ծառայության և «Արդարության ուղի» հասարակական կազմակերպության, ինչպես նաև «Հայ օգնության ֆոնդ» հիմնադրամի հետ

համագործակցության արդյունքում պրոբացիայի թվով 10 շահառուներին տրամադրվել է պարենային փաթեթներ:

- Սույն թվականի հոկտեմբեր ամսին Պրոբացիայի ծառայության և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում պրոբացիայի ծառայության շահառուների շուրջ 12 երեխաներին տրամադրվել է գրենական պարագաների փաթեթ՝ գրենական պիտույքներ, պայուսակներ և զարգացնող խաղեր: «Աջակցություն նախկին ազատագրվածներին՝ դիմակայելու COVID-19 համավարակի ռիսկերին» ծրագրի շրջանակում պրոբացիայի ծառայության թվով 77 շահառուներին տրամադրվել է առաջին անհրաժեշտության սնունդ:

- Սույն թվականի նոյեմբեր ամսին Պրոբացիայի ծառայության և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում նախատեսվում է պրոբացիայի ծառայության պատժից պայմանական վաղաժամկետ ազատված թվով 40 շահառուների տրամադրվել է պարենային փաթեթներ և հիգենիայի պարագաներ:

Պրոբացիայի ոլորտին առնչվող օրենսդրական բարեփոխումներ

1) ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի N 123-Ա հրամանով հաստատվել է Պրոբացիայի ծառայության շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքի ձևանմուշը և կիրառման կարգը:

2) ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 14-ի N 142-Լ հրամանով հաստատվել է Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացնելու կարգը և ժամկետները:

3) մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությունների փաթեթ: «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերն արդեն իսկ տեղադրվել են իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

4) ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ հրամանով հաստատված Պրոբացիայի ծառայության կողմից տրամադրվող զեկույցի ձևանմուշն ուսումնասիրվել և ՀՀ արդարադատության նախարարություն առաջարկ է ներկայացվել զեկույցի ձևանմուշում կատարել մի շարք բովանդակային և տեխնիկական փոփոխություններ և լրացումներ:

5) գնահատվել և ՀՀ արդարադատության նախարարություն առաջարկ է ներկայացվել Պրոբացիայի ծառայության առկա կարգավիճակի, դրա թերությունների և պրոբացիայի ծառայողներին վերապահված սոցիալական երաշխիքների վերաբերյալ:

6) Պրոբացիայի ծառայության կողմից մշակվել է և հրատարակման նպատակով «Փի-Էյչ Ինթերնեյշնլ» ՀԿ-ին է ներկայացվել «ՀՀ պրոբացիայի ծառայողի գործնական ձեռնարկ», «ՀՀ պրոբացիայի ծառայության ղեկավար կազմի գործնական ձեռնարկ» և «Պրոբացիայի ծառայության անձնակազմի և ղեկավար կազմի վերապատրաստման դասընթացների մեթոդական ձեռնարկը»:

7) ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրամադրվել է եզրակացություն, որով հստակեցվել են Պրոբացիայի ծառայության գործունեության հետ կապված գործառույթները:

Այլ ընթացիկ աշխատանքներ

Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվում են Ծառայության Երևանի քաղաքային և մարզային մարմինների աշխատակիցների գիտելիքների, հմտությունների ու ունակությունների զարգացման դասընթացներ: Այս առնչությամբ 2020 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի համագործակցության արդյունքում «Աջակցություն նախկին ազատազրկվածներին՝ դիմակայելու COVID-19 համավարակի ռիսկերին» ծրագրի շրջանակում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ պրոբացիայի ծառայության աշխատակիցների հետ, որին մասնակցել են Երևանի քաղաքային մարմնի 19 աշխատակից և տարածքային մարմիններից՝ 20 աշխատակից: Դասընթացները իրականացվել են 4 հիմնական ուղղություններով.

1. Դեպքի վարումը և սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները պրոբացիայի ծառայությունում.

2. Անձնական տվյալների պաշտպանությունը.

3. Ճգնաժամային իրավիճակ. արձագանքում, ինքնակարգավորման հիմունքներ, մասնագիտական այրման պրոֆիլակտիկա.

4. ՀՀ-ում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը, իրավական կարգավորումները և հիմնախնդիրները պրոբացիայի ծառայությունում:

Պրոբացիայի ծառայողների նոր գիտելիքների և փորձի ձեռք բերման նպատակով Պրոբացիայի ծառայությունը կազմակերպել և իրականացրել է հատուկ վերապատրաստման դասընթացներ: Դասընթացների իրականացումը կազմակերպվել է Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի կազմակերպամեթոդական բաժնի և Երևանի քաղաքային մարմնի կողմից: Դասընթացները հիմնականում վերաբերել են՝

1. քրեական ոլորտի օրենսդրական փոփոխությունների ծանոթացմանը,

2. արդյունավետ հաղորդակցման հմտությանը,

3. ռիսկերի և կարիքների էլեկտրոնային գործիքի լրացմանը,

4. պրոբացիայի շահառուների հետ մոտիվացիոն հարցազրույցի վարմանը,

5. պրոբացիայի ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմմանը,

6. կանանց և անչափահաս անձանց հետ տարվող աշխատանքներին,

7. պետական և ոչ պետական մարմինների հետ համագործակցության աշխատանքների կազմակերպմանը:

Պրոբացիայի ոլորտում իրականացվող հանրային իրազեկման բարձրացման և արդարադատության շղթայում ընդգրկված մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով 2020 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխման և հանդուրժողականության աստիճանի բարձրացմանն ուղղված 2020 թվականի օգոստոսի 20-ին Պրոբացիայի ծառայության աշխատակիցները Հայաստանի հանրային ռադիոյի «Դպրություն» կրթական ծրագրում ներկայացրեցին Պրոբացիայի ինստիտուտի ներդրման, Պրոբացիայի ծառայության ստեղծման, ինչպես նաև պրոբացիայի գործունեության հետ կապված տեղեկատվություն:

2. Պրոբացիայի շահառուների հետ տարվող վերասոցիալականացման միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով 2020 թվականի սեպտեմբերի 15-ին «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում ներկայացվեց Պրոբացիայի ծառայության գործունեությունը, հատկապես կանանց և անչափահաս շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքները, ինչպես նաև Պրոբացիայի ծառայությունում իրականացվող վերասոցիալականացման ծրագրերը:

3. Դատապարտյալների վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ ԱՆ «Իրավական կրթություն և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ «Աջակցություն նախկին ազատազրկվածներին՝ դիմակայելու COVID 19 համավարակի ռիսկերին» ծրագրի շրջանակում 2020 թվականի հոկտեմբեր ամսին տպագրվել է «Տեղեկատվական թերթիկ» գրքույկը, որն իր մեջ ներառում է սոցիալական, հոգեբանական, իրավական, առողջապահական աջակցություն տրամադրող պետական և ոչ պետական կազմակերպությունների տվյալները, որոնք տրամադրում են անվճար ծառայություններ: